

Հաագա / Նյու Յորք, մայիսի 5, 2015թ.

Հայաստանի Հանրապետության նախագահ

Մեծարգո Մերժ Սագյանին

*Միջազգային քրեական դատարանի Հռոմի կանոնադրությունը Հայաստանի կողմից
վավերացնելու վերաբերյալ*

Մեծարգո՝ նախագահ,

Պատիվ ունենք Ձեզ գրելու «Միջազգային քրեական դատարանի համար» կոալիցիայի անունից, որը 150 երկրում գործող 2.500 հասարակական և քաղաքացիական հասարակության կազմակերպությունների ցանց է և խրախուսում է արդար, արդյունավետ և անկախ դատարանի գործունեությունը, ինչպես նաև՝ ցեղասպանության, մարդկության դեմ ուղղված հանցագործությունների և պատերազմական հանցագործությունների զոհերի արդարադատության մատչելիությունը:

Պարո՛ն նախագահ, անցյալ ամիս Հայաստանը նշեց Մեծ եղեռնի հարյուրամյակը, որը իլել է հայ, ասորի և Պոնտոսի հույն բնակչության կյանքը Օսմանյան կայսրությունում: Այս պաշտոնական տարելիցը ավելի աղետալի է դառնում կատարված հանցագործությունների համար պատասխանատվության բացակայության պատճառով:

Այսօր առկա է միջազգային մեխանիզմ, որը կոչված է ապահովելու, որ նման հանցագործությունների համար անպատժելիությունը բացառվի: Դա Միջազգային քրեական դատարանն է՝ մշտական հիմունքներով գործող միակ դատական մարմինը, որն իրավասու է քննություն իրականացնել ցեղասպանության, պատերազմական հանցագործությունների, մարդկության դեմ ուղղված հանցագործությունների վերաբերյալ:

Մակայն դատարանի՝ միջազգային հանցագործությունների զոհերի նկատմամբ արդարադատություն իրականացնելու հնարավորությունը կախված է պետությունների անդամությունից և համագործակցությունից: Մեծ թվով պետությունների և ժողովուրդների՝ ներառյալ Հայաստանի Հանրապետության վրա չի տարածվում այս համակարգը, որը նպատակ ունի վերջ դնելու ցեղասպանության, մարդկության դեմ ուղղված հանցագործությունների և պատերազմական հանցագործությունների համար անպատժելիությանը:

Հենց այս նպատակը հետապնդելով՝ Կոալիցիան 2015թ. մայիսի «Գլոբալ արդարադատության քարոզարշավի» շրջանակներում, հարգանքով դիմում է

Հայաստանին՝ կոչ անելով արագացնել Միջազգային քրեական դատարանի Հռոմի կանոնադրության վավերացմանն ուղղված ջանքերը:

Մեծարգո՝ նախագահ, Հայաստանը մի շարք առիթներով ապացուցել է իր պատրաստակամությունը աջակցելու միջազգային արդարադատության համակարգին: 1998թ.-ին ակտիվ մասնակցություն է ցուցաբերել Հռոմում միջազգային քրեական դատարանի ստեղծման կոնֆերանսին, 1999թ. հոկտեմբերի 1-ին ստորագրել է Միջազգային քրեական դատարանի (ՄՔԴ) Հռոմի կանոնադրությունը:

2010թ. մայիսին ՄԱԿ-ի մարդու իրավունքների խորհրդի համընդհանուր 8-րդ նստաշրջանի պարբերական վերանայման ժամանակ Հայաստանն ընդունել է Հռոմի կանոնադրությունը վավերացնելու առաջարկությունը: Նույն տարվա դեկտեմբերին կայացած ՄՔԴ-ի անդամ պետությունների Ասամբլեայի ժամանակ Հայաստանն արձագանքել է ԵՄ-ի անունից արված հայտարարությանը և վերահաստատել Հռոմի կանոնադրությունը վավերացնելու իր պատրաստակամությունը: Թեև նման առաջարկություններ քննարկել են դեռևս 2015թ. հունվարին տեղի ունեցած ՄԱԿ-ի մարդու իրավունքների խորհրդի համընդհանուր 21-րդ նստաշրջանի պարբերական վերանայման ժամանակ, որտեղ Հայաստանը հայտնեց, որ «Միջազգային քրեական դատարանի Հռոմի կանոնադրության վավերացումը հնարավոր կլինի, երբ սահմանադրական բարեփոխումների գործընթացի ժամանակ համապատասխան խնդիրներին լուծում տրվի»: Մենք լիահույս ենք, որ Հայաստանը կընդունի Կանոնադրության վավերացմանը վերաբերող 14 առաջարկությունները:

Միջազգային արդարադատությանն աջակցելու Հայաստանի պատրաստակամության մասին նաև շեշտվեց Ձերդ գերազանցության հայտարարության մեջ՝ 2011թ. սեպտեմբերին ՄԱԿ-ի Գլխավոր ասամբլեայի 66-րդ նստաշրջանի ժամանակ. «Մենք միանշանակորեն ողջունում ենք միջազգային հանրության մեջ արմատավորված հստակ կեցվածքը, որը բացառում է ցեղասպանության և մարդկության դեմ իրականացրած այլ հանցագործություններ կատարողների նկատմամբ որևէ անձեռնմխելիության կամ ներման հնարավորությունը: ...Հայաստանը շարունակելու է գործադրել իր ողջ կարողությունները ցեղասպանությունների ճանաչման, դատապարտման և կանխարգելման նպատակով»¹:

Մակայն անպատժելիությանն իսկապես վերջ դնելը պահանջում է պատրաստակամության մի մակարդակ, որի մասին վկայում է Հռոմի կանոնադրության վավերացումը և լիարժեքորեն կատարումը, ինչպես նաև ակտիվ ներգրավվածությունը միջազգային արդարադատության համակարգում՝ ապահովելու, որպեսզի մեղավորները, որտեղ էլ որ լինեն, պատասխանատվության ենթարկվեն:

Մենք ողջունում են ՀՀ կառավարության պատասխանը կոալիցիայի՝ 2014թ. ապրիլի քարոզարշավին, որով կոչ էր արվում Հայաստանի Հանրապետությանը վավերացնել Հռոմի կանոնադրությունը: Այդ պատասխանում ՀՀ նախագահի աշխատակազմի ղեկավար պարոն Վիգեն Սարգսյանը հայտնել է. «Սահմանադրական բարեփոխումների մասնագիտացված հանձնաժողովում քննարկվել է Հռոմի

¹ <http://gadebate.un.org/66/armenia>

կանոնադրության վավերացման հարցը և այն ներառվել է Սահմանադրական բարեփոխումների հայեցակարգի նախագծում»: Իսկապես, Սահմանադրական բարեփոխումների հայեցակարգի նախագծի 2.6.4-րդ կետում նշվում է. «Սահմանադրական բարեփոխումները պետք է նախադրյալներ ստեղծեն նաև Հայաստանի Հանրապետության կողմից 1998թ. հուլիսի 17-ին Հռոմում ստորագրված՝ «Միջազգային քրեական դատարանի կանոնադրության մասին» համաձայնագրի վավերացման համար՝ նկատի ունենալով, որ ՀՀ սահմանադրական դատարանի 2004թ. օգոստոսի 13-ի ՄԴՈ-502 որոշմամբ հիշյալ համաձայնագրով ստանձնված որոշ պարտավորություններ ճանաչվել են ՀՀ սահմանադրությանը հակասող»²:

2014թ. հոկտեմբերին հանձնաժողովի վերջնական հայեցակարգի ընդունումը, որը 2015թ. մարտի 13-ին հաստատվել է Ձերդ գերագնացության կողմից, և Հռոմի կանոնադրությունը վավերացնելու համար Սահմանադրության մեջ համապատասխան փոփոխություններ կատարելու ընթացիկ զարգացումները շատ ողջունելի են: Մենք մեծ ակնկալիքներով հետևում ենք սահմանադրական նոր փոփոխությունների ձևակերպմանը, որը թույլ կտա վավերացնել Հռոմի կանոնադրությունը մինչև Ձեր կողմից ընդունված 04.09.2013թ. հրամանագրի 4(2) կետով սահմանված վերջնաժամկետը՝ 2016թ. հունվարի 13-ը:

Մեծարգո՝ նախագահ, Եվրոպական Միության հետ ընթացիկ բանակցությունները ԵՄ-Հայաստան Ասոցացման պայմանագրին փոխարինող, երկկողմանի հարաբերությունները կարգավորող նոր գործիքի վերաբերյալ լրացուցիչ խթան են հանդիսանում այս կարևոր գործում զարգացում ամրագրելու համար: Դեռևս 2006թ. Հայաստանը ԵՄ-Հայաստան Հարևանության քաղաքականության գործողությունների ծրագրի շրջանակում պատրաստակամություն է հայտնել Հռոմի կանոնադրության վավերացման գործընթացի նախաձեռնության և անհրաժեշտ օրենսդրական և սահմանադրական փոփոխությունների իրականացման համար: Նոր պայմանագիրը, որով ևս մեկ անգամ կնշվի այս խոստումը, պարարտ հող կհանդիսանա անպատժելիության երևույթի վերացման համար՝ առաջ մղելով ժողովրդավարության, արդյունավետ կառավարման, արդարադատության, օրենքի գերակայության սկզբունքները և գոհերի համար ամենուր արդարադատության ապահովումը: Արտաքին գործերի նախարար պարոն Էդվարդ Նալբանդյանի կողմից մի քանի անգամ նշված կոչն առ այն, որ ԵՄ-Հայաստան Ասոցացման պայմանագրի քաղաքական տարրերը կպահպանվեն նոր գործիքում, նույնպես ողջունելի է՝ որպես Հռոմի կանոնադրության վավերացման և իրականացման միջոցով խաղաղության և միջազգային արդարադատության զարգացման գործում համագործակցելու երկու կողմերի ներգրավվածության արտացոլում:

Մեծարգո՝ նախագահ, այս ամսվա սկզբին Պաղեստինը դարձել է 123-րդ պետությունը, որը միացել է ՄԲԴ-ին: Սակայն միայն դատարանի համընդհանուր ընդունման դեպքում մենք կարող ենք ապահովել, որ արդարադատություն երաշխավորվի առանձնապես ծանր հանցագործությունների համար, անկախ նրանից, թե որտեղ են դրանք տեղի ունենում: Հայաստանի կողմից Հռոմի կանոնադրության վավերացումը ոչ միայն կարևոր է համաշխարհային արդարադատության, օրինականության

² http://moj.am/storage/uploads/A_00.pdf

ապահովման և Դատարանին աջակցության համար, այլ նաև ցեղասպանության, պատերազմական հանցագործությունների և մարդկության դեմ հանցագործությունների՝ անցյալ, ներկա և ապագա զոհերի նկատմամբ հարգանքի տուրք է:

2015թ. ապրիլի 9-ին Իտալիա կատարած պաշտոնական այցի ժամանակ Ձերդ գերազանցությունը նշել է. «Մենք չենք կարող փոխել անցյալը, բայց մենք կարող ենք և պարտավոր ենք կերտել ցեղասպանություններից զերծ ապագա: Մենք պարտավորություններ ունենք նրանց առջև, ովքեր զոհ են գնացել այդ և նրանց առջև, ովքեր վերապրել են այդ սարսափները: Մենք պատասխանատու ենք այն բոլոր մարդկանց առջև, ովքեր վտանգի տակ են նույնիսկ մեր օրերում՝ 21-րդ դարում»:³

Մեծարգո՝ նախագահ, մենք լիովին համաձայն ենք Ձեզ հետ:

Մենք հույս ունենք մոտ ապագայում Հայաստանը տեսնել Մասնակից պետությունների ասամբլեայում:

Հարգանքով,



Ելենա Պիա-Վոմելյա
Ծրագրի ղեկավար
ՄՔԴ-ի համար կոալիցիա



Քիրստեն Միերսթերթ Դուխենար
Հաագայի քարտուղարության ղեկավար
Կոալիցիայի՝ Եվրոպական
տարածաշրջանի համակարգող

Պատճենը՝

Պարոն Հովիկ Աբրահամյանին, Վարչապետ

Պարոն Էդվարդ Նալբանյանին, Արտաքին գործերի նախարար

Պարոն Հովհաննես Մանուկյանին, Արդարադատության նախարար

Պարոն Զոհրապ Մնացականյանին, ՄԱԿ-ում ՀՀ մշտական ներկայացուցչության ղեսպան

Տիկին Չյունիկ Աղաջանյանին, Նիդերլանդների թագավորությունում ՀՀ արտակարգ և լիազոր ղեսպան

Պարոն Թաթուլ Մարգարյանին, Բելգիայի թագավորությունում ՀՀ արտակարգ և լիազոր ղեսպան

Պարոն Շարլ Ագնավորին, Եվրոպայում ՄԱԿ-ի գրասենյակում ՀՀ մշտական ներկայացուցիչ, ղեսպան

³ As reported in ArmenPress, “We can and we must create future without genocides: Armenia’s President,” 10 April 2015. www.armenpress.am/eng/news/801162/we-can-and-we-must-create-future-without-genocides-armenias-president.html

Պարոն Արման Կիրակոսյանին, ԵԱՀԿ-ում Հայաստանի մշտական ներկայացուցիչ,
ղեսպան

Պարոն Արմեն Պապիկյանին, Եվրոպայի խորհրդում ՀՀ-ի մշտական ներկայացուցիչ,
ղեսպան

Պարոն Գալուստ Մահակյանին, ՀՀ Ազգային ժողովի նախագահ

Պարոն Գագիկ Հարությունյանին, ՀՀ սահմանադրական դատարանի նախագահ